ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-8Բ

ք. Երևան <<29>> 12. 2015 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա>> ՊՈԱԿ-ը, ի դեմս ակադեմիայի ռեկտոր Ա. Իսաբեկյանի, որը գործում է ակադեմիայի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի 09.4.1.02. <<Բարձրագույն մասնագիտական կրթություն>> ծրագրի շրջանակներում Երևանի գեղառվեստի պետական ակադեմիայի միջին տարեկան 259 ուսանողներիի համար հաշվարկված, ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է մինչև 214825700 (երկու հարյուր տասնչորս միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը՝ 4860000 (չորս միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ և մասնակի փոխհատուցումը՝ 1735500 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա >>
ք. Երևան, Կառավարական 3 շենք	ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ք. Երևան, Իսահակյան 36
Հ/Հ 900011034130	<<Անելիք բանկ>> ՍՊԸ << Կենտրոնական>> մ/ճ
Նախարարության աշխատակազմի	Հ/Հ 118051070332
ղեկավար՝ ---------- Մ. Ղազարյան	Ռեկտոր՝ ---------- Ա. Իսաբեկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ